Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Երևանի Ա.Ս. Պուշկինի անվան թիվ 8 հիմնական դպրոց»

ՊՈԱԿ

Առարկա՝ Անգլերեն

Թեմա՝ Մոտիվացիան որպես ուսուցման կարևորագույն մաս

Վերապատրաստող, մենթոր՝ Գայանե Մանուկյան

Ուսուցիչ՝ Ալիսա Մեհրաբյան

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……3

ԳԼՈՒԽ 1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ՏԵՍԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1.1 Մոտիվացիայի էությունը և տեսակները……...……5

1.2 Միջին դպրոցականների ուսումնական մոտիվացիայի առանձնահատկությունները……...8

ԳԼՈՒԽ 2. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱՆԳԼԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ԽԹԱՆՄԱՆ ՁԵՎԵՐ

2.1 Խաղային տեխնոլոգիաների օգտագործումը օտար լեզվի դասաժամին որպես մոտիվացիայի ձևավորման միջոց……..……..……14

2.2 Հեքիաթների օգտագործումը օտար լեզվի դասաժամին որպես մոտիվացիայի խթանման միջոց……..……..……...……19

2.3 Տեսանյութի օգտագործումը օտար լեզվի դասաժամին որպես մոտիվացիայի խթանման միջոց……..……21

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……..……25

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……27

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքի արդիականությունը: Ժամանակակից դպրոցը գտնվում է վերակառուցման փուլում. մշտապես տեղի են ունենում ուսուցման բովանդակության, ուսումնական գործունեության կազմակերպման բարեփոխումներ, որոնք մի շարք պրոբլեմային իրավիճակների առջև են կանգնեցում թե' ուսուցիչներին, և թե' աշակերտներին, ինչի արդյունքում տուժում է ուսումնական գործունեությունը: Միաժամանակ փոխվում է աշակերտների ներընտանեկան, համադասարանցիների, ինչպես նաև ուսուցիչների հետ միջանձնային փոխհարաբերությունների բնույթը: Այս ամենն օրինաչափորեն ազդում է աշակերտների սովորելու ցանկության՝ մոտիվացիայի բարդ համակցության վրա:

Հիմնախնդրի ուսումնասիրության հրատապությունը թելադրված է նաև դպրոցում աշակերտ-աշակերտ, աշակերտ-ուսուցիչ փոխհարաբերություններում առաջացող տարբեր դժվարությունների հաղթահարման, կանխարգելման և սովորողների միջանձնային հարաբերությունները անգլերենի՝ որպես օտար լեզվի ուսումնական գործընթացին ի նպաստ օգտագործելու, այն որպես սովորելու ձգտման, ուսումնական մոտիվացիոն խթանելու միջոց դարձնելու անհրաժեշտությամբ:

Հիմնախնդրի կարևորությունն ու հրատապությունը պայմանավորված են ուսումնական ներդաշնակ մոտիվացիայի ու միջանձնային արդյունավետ փոխազդեցության, միջին դպրոցում հոգեբանական ուղեկցության դերի կարևորության և համապատասխան հիմնարար ու կիրառական հետազոտությունների սակավությամբ:

Ժամանակակից հասարակության օբյեկտիվ կարիքները, այդ թվում՝ կրթության բարեփոխումների համատեքստում, օտար լեզուների ուսումնական մոտիվացիայի բարձրացման օպտիմալ ուղիների որոնումն է: Որքան բարձր լինի սովորողների մոտիվացիայի մակարդակը, այնքան ավելի արդյունավետ կլինի օտար լեզվի ուսուցումը:

Հասարակության ժողովրդավարացումը և երկրում ազգային ինքնագիտակցության աճը հանգեցրել են դպրոցի առջև դրված խնդիրների արմատական վերանայմանը: Օտար լեզվի ուսուցման հիմնական նպատակներն են՝ անհատական-գործնային մոտեցման իրականացումը և ուսումնական գործունեության մեջ կայուն դրական մոտիվացիայի ձևավորումը:

Հետազոտության **արդիականությունը** պայմանավորված է ուսուցման գործընթացում նոր մեթոդների և տեխնոլոգիաների ներդրմամբ սովորողների՝ անգլերենի ուսումնական մոտիվացման կարևորագույն միջոցի սոցիալական և կիրառական նշանակությամբ:

Հետազոտական աշխատանքի նպատակը: Հետազոտության նպատակն է բացահայտել միջին դպրոցի աշակերտների միջանձնային հարաբերությունների և ուսումնական մոտիվացիայի հարաբերակցության դինամիկայի սոցիալ-հոգեբանական գործոնները և բարելավման միջոցները:

Հետազոտական աշխատանքի խնդիրները: Հետազոտության նպատակին համապատասխան առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1) վերլուծել մոտիվացիայի էությունը և տեսակները,
2) ներկայացնել միջին դպրոցականների ուսումնական մոտիվացիայի առանձնահատկությունները,
3) ուսումնասիրել խաղային տեխնոլոգիաների օգտագործումը օտար լեզվի դասաժամին որպես մոտիվացիայի ձևավորման միջոց,
4) ուսումնասիրել հեքիաթների օգտագործումը օտար լեզվի դասաժամին որպես մոտիվացիայի խթանման միջոց,
5) ուսումնասիրել տեսանյութի օգտագործումը օտար լեզվի դասաժամին որպես մոտիվացիայի խթանման միջոց,
6) հետազոտական արդյունքների հիման վրա կատարել եզրակացություններ:

Հետազոտական աշխատանքի կառուցվածքը: Հետազոտական աշխատանքը կազմված է երկու գլխից, հինգ ենթագլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ՏԵՍԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1.1 Մոտիվացիայի էությունը և տեսակները

Մոտիվացիան առաջացել է լատիներեն movere բառից: Եզրույթն առաջին անգամ օգտագործել է Ա. Շոպենհաուերը իր «Բավարար պատճառի չորս սկզբունքներ» հոդվածում: Մոտիվացիայի վերաբերյալ բազմաթիվ սահմանումների ենք հանդիպում, օրինակ՝ մոտիվացիան մարդու կողմից այս կամ այն վարքագծի գիտակցված ընտրության գործընթացն է[1]:

Տեսաբանները մոտիվացիայի մի շարք դասակարգումներ են առաջարկել: Օրինակ՝ դրական և բացասական: Դրական մոտիվացիան բլիթի քաղաքականությունն է, որը դրսևորվում է գովաբանությունների, պարգևատրումների, արտոնությունների տեսքով՝ ուղեկցվում է դրական հույզերով՝ ուրախություն, հաճույք: Բացասական մոտիվացիան՝ մտրակն է՝ պատիժների, պահումների, քննադատության տեսքով, որին ավելանում են բացասական հույզերը և զգացմունքները՝ վախ, տհաճություն, զայրույթ: Այստեղ կարևոր է այն դիտարկումը, որ մոտիվացիայի մշտական կիրառումը կարող է կորցնել իր ազդեցությունը:

Մոտիվացիայի հաջորդ դասակարգումը հետևյալն է՝ արտաքին և ներքին: Արտաքին մոտիվացիան ենթադրում է, որ անձի՝ գործողություն կատարելու վրա ազդում են մեծապես արտաքին աշխարհից եկող ազդակները՝ պատիժը կամ պարգևատրումը, սպառնալիքները կամ գովաբանությունը: Ներքին մոտիվացիան կապված է հենց անձի գործունեության հետ: Ներքին մոտիվացիայի օրինակներ կարող են լինել ուսուցման դրական արդյունքները, ուսուցման բովանդակությունը և կարևորությունը, ինքնահարգանք ձեռք բերելը և այլն:

Ա. Մասլոուն ((1908-1970 թթ.) հումանիստական հոգեբանության հիմնադիրներից մեկն է, ով մշակել է անձի պահանջմունքների հիերարխիան) մոտիվացիան դիտարկել է պահանջմունքների բավարարման տեսանկյունից՝ նշելով, որ նախ պետք է բավարարված լինեն մարդու հիմնական պահանջմունքները, միայն դրանից հետո նրանք կարող են

[1] Асеев В. Г. Мотивация поведения и формирование личности. – М., 1976.

ձգտել ինքնիրացման և ինքնակատարելագործման: Ա. Մասլոուի պահանջմունքների հիերարխիկ համակարգն ունի հետևյալ տեսքը[2].



Նկար 1. Ա. Մասլոուի պահանջմունքների հիերարխիկ համակարգ

Ֆիզոլոգիական կամ կենսաբանական պահանջմունքներ. այս պահանջմունքները թեև ամենատարրականն են, սակայն ամենադոմինանտողն են, եթե, օրինակ, նրանցից որևէ մեկը միաՀժամանակ չի բավարարվում, ապա կարճ ժամանակ անց այդ պահանջմունքը դառնում է գերակա, իսկ մնացյալ բոլոր պահանջմունքները մղվում են հետին պլան:

Անվտանգության կամ կայունության, օրինականության, կանխատեսելիության պահանջմունք՝ ուսումնասիրություն է կատարվել երեխաների շրջանում, հասկանալու համար որքանով է ընտանիքում ընդունված ռեժիմը և առողջ փոխհարաբերությունները նպաստում երեխաների անվտանգության պահանջմունքի ի հայտ գալուն ու արտահայտմանը: Պարզ է դարձել, որ այն ընտանիքներում, որտեղ առկա է կանոնավոր ռեժիմ (քնելու, սնվելու, զբոսնելու) և ընտանիքի ներսում գերակա են առողջ փոխհարաբերությունները, փոխվստահությունը, ապա այդ երեխաների մոտ անվտանգության պահանջմունքը թույլ է արտահայտվում, նրանք չեն ունենում վախեր,

[2] Общая психология: Учебник /под ред. Тугушева Р.Х. и Гарбера Е.И. – М.: Эксмо, 2006.

ֆոբիաներ և այլն: Ամբողջովին հակառակ պատկերն է անկանոն ռեժիմ, լարված փոխհարաբերություններ, բռնություններ գործադրող ընտանիքներում:

Սիրո և սոցիալական պատկանելիության պահանջմունք՝ Մասլոուն սիրո երկու տիպ է առանձնացրել՝ դեֆիցիտային և գոյության: Դեֆիցիտային է համարել այն սերը, որն էգոիստական է, վերցնում է, սակայն չի տալիս: Գոյության սերը թույլ է տալիս ընտրություն կատարել՝ առանց ակնկալիքների, դիմացինին ընդունելով որպես արժեք:

Հարգանքի պահանջմունքը ևս Մասլոուն դիտարկում է երկու տեսանկյունից՝ ինքնահարգանք և հարգանք մյուսների կողմից: Ինքնահարգանքի պարագայում անձը կարևորում է հետևյալ արժեքները՝ իրավունքներ, վստահություն, մարդկային փոխհարաբերություններ և այլն: Մյուսների կողմից հարգանք ստանալու պարագայում անձի համար արժեքներ են հանդիսանում ճանաչումը, ստատուսը, գնահատումը:

Ինքնաիրացման պահանջմունք՝ ցանկությունն է դառնալ նա, ով կարող էր լինել, այսինքն՝ հասնել պոտենցիալի գագաթնակետին: Այս պարագայում առաջանում է հետևյալ մոտեցումը, որ պարտադիր չէ զբաղվել ստեղծագործական կամ որևէ հանրօգուտ աշխատանքով, բավարար է միայն այն, որ յուրաքանչյուր աշխատանք, որը կատարում է անձը, կատարի լավագույն ձևով:

Այս հիերարխիան ենթադրում է, որ երբ բավարարված չեն անձի ստորին մակարդակի պահանջմունքները, նա չի կարող մտածել ինքնահարգանքի կամ ինքնարտահայտման մասին[7]:

1.2 Միջին դպրոցականների ուսումնական մոտիվացիայի առանձնահատկությունները

Ուսումնական գործընթացում ներդրված նոր տեխնոլոգիաներն ու մեթոդներն առավելապես հիմնված են խմբային ուսուցման, աշակերտակենտրոն ուսումնառության, ուսուցիչների կոմպետենտության շարունակական զարգացման հիմնախնդիրների վրա: Այս գործընթացում հրատապ է կրթության սուբյեկտների միջև ակտիվ փոխներգործության հիմնախնդիրը: Սակայն շատ դեպքերում հանրակրթության սուբյեկտները պատրաստ չեն այդ նորարարություններին, որն առաջացնում է համապատասխան գործնական կիրառական լուծումներ գտնելու և ժամանակակից դպրոցին առաջարկելու անհրաժեշտություն:

Լ. Ա. Ռեգուշի կողմից դեռահասների միջանձնային հարաբերությունների վերաբերյալ պրոբլեմային իրավիճակների որակական վերլուծությունները վկայում են, որ միջին դպրոցում սովորողների միջանձնային հարաբերությունների մոտիվացիան կապված է դեռահասի դիրքի փոփոխությունների, դեռահասի՝ հասակակիցների և ուսուցիչների հարաբերությունների, դեռահասին ներկայացվող նոր ուսումնական պահանջների հարմարման, կատարված առաջադրանքի դիմաց վատ գնահատական ստանալու սպասման հետ[3]: Լ. Ռեգուշը, սակայն, հաշվի չի առնում մի շարք սոցիալ-հոգեբանական գործոններ, հատկապես ուսուցչի սոցիալ-հոգեբանական կոմպետենտությունը:

Լ. Ֆրիդմանի, Ի. Կուլագինայի կիրառական մոտեցումներում դեռահաս-մեծահասակ փոխհարաբերությունների կառուցման համակարգում շեշտադրվում է փոխվստահության գաղափարը, որի շնորհիվ դեռահասը ոչ միայն հնարավորություն է ստանում ինքնաբացահայտվելու, այլև ձգտում է ինքնակատարելագործման[4]:

Վստահելի հարաբերությունների հաստատման հետևանքով է, որ մեծահասակը դեռահասի համար դառնում է օգնական, ուղղորդող: «Աշակերտ-ուսուցիչ վստահելի փոխհարաբերությունների ձևավորման արդյունքում դեռահասը սկսում է գնահատել

[3]Регуш Л. А ; Самоотношение подростков и переживание проблем школьной жизни; Научный журнал; Известия РГПУ им. А.И. Герцена 2009; № 100 с. 64.
[4]Фридман Л.М., Кулагина И.Ю. Психологический справочник учителя. - М.: Просвещение, 1991. с. 28.

ուսուցչի ոչ միայն անձնային որակները, այլև պրոֆեսիոնալիզմը, պահանջկոտությունը»[5]:

Այդ է պատճառը, որ ուսումնական խմբում վստահելի հարաբերությունների առկայության դեպքում ուսուցչի պահանջկոտությանը դեռահասը ադեկվատ է հակազդում և այն ընդունում է միայն որպես իր անձնային աճին նպաստող, իրեն աջակցող գործոն:

Միմյանց հասկացման հիմնախնդրում «ռեֆլեքսիան հանդես է գալիս որպես հետադարձ կապ, որը նպաստում է հաղորդակցվող սուբյեկտների վարքի մարտավարության ձևավորմանը և նրանց միմյանց յուրատիպ ներաշխարհի հասկացմանը և շտկմանը»[6]:

Այսպիսով, միջին դպրոցում սովորող աշակերտների միջանձնային հարաբերությունն անընդհատ շարժընթացի մեջ գտնվող երևույթ է, որի բովանդակային փոփոխությունները կապված են սոցիալ-հոգեբանական գործոնների ազդեցություններից: Կարևորում ենք միջին դպրոցի ուսուցիչների սոցիալ-հոգեբանական կոմպետենտության շարունակական զարգացման անհրաժեշտությունը, քանի որ փորձագիտական գնահատումները, դիտարկումները, անհատական դեպքերի վերլուծությունները ցույց են տալիս, որ ուսուցիչների սոցիալ-հոգեբանական կոմպետենտությունը մեծ մասամբ (անձնային, էմպատիկ, հաղորդակցական կարողությունները, հանդուրժողականությունը, համագործակելու պատրաստականությունը) միջին կամ ցածր է, և փոխներգործուն ուսուցում կազմակերպելու համար այն զարգացնելու անհրաժեշտություն է առաջանում:

Անդրադառնալով դեռահասների խմբում սոցիալ հոգեբանական եղանակին Ա. Ռեանը գրում է. «սոցիալ-հոգեբանական եղանակը խմբում միշտ շարժման մեջ է»[7]:

Ուսուցչի սոցիալ-հոգեբանական կոմպետենտությունն անուղղակիորեն ազդում է միջանձնային հարաբերությունների՝ համագործակցային, աջակցող, թե մերժողական

---

[5]Истратова О. Н, Эксакусто Т.В „ Справочник психолога средней школы,, Издательство шестое Ростов - На - Дону - 2010. с. 31-32.

[6]Գևորգյան Ս. Ռ. Հաղորդակցում հասկացությունը հոգեբանական գիտության մեջ, Հոգեբանությունը և կյանքը, Երևան - 2005, թիվ 1, էջ 79-80:

[7]Реан А. А. Коломинский Я. Л., Социальная педагогическая психология. СПБ; Питер Ком, 1999. - с. 125.

հարաբերությունների վրա: Այսինքն, սոցիալ-հոգեբանական եղանակը խմբում ինքնաբերաբար չի ստեղծվում, այլ որոշակի կերպով ղեկավարվում է ուսուցչի կողմից, որն էլ իր հերթին կարող է նպաստել միջանձնային կառուցողական հարաբերությունների և ուսումնական մոտիվացիայի համարժեք շարժընթացին:

Մի շարք հետազոտողներ դեռահասի հարաբերությունների շարժընթացը բացատրում են հարաբերությունների երկակիությամբ, երկկողմանիությամբ, ներքին և արտաքին հակասությունների համատեքստում: Ներքին հակասությունը վերաբերում է դեռահասի կողմից միջանձնային հարաբերությունների սուբյեկտիվ ընկալմանը, արտաքին հակասությունն ու երկարժեքությունն առաջանում է դեռահասին ներկայացվող պահանջների ու սպասումների անհամարժեքությունից:

Այսպիսով, ներքին և արտաքին ազդեցությունների հակասությունն է, որ դանդաղեցնում է դեռահասի հարմարվողականության գործընթացը՝ մեծ հաշվով խաթարելով միջանձնային հարաբերությունների զարգացմանը նպաստող շարժընթացը: Այդ է պատճառը, որ դեռահասը կարող է չհասկացվել ուսումնական խմբի կողմից, մեկուսանալ, հայտնվել միջանձնային հարաբերությունների և ուսումնական գործընթացից դուրս:

Ուսուցիչների սոցիալ-հոգեբանական կոմպետենտության դերն ու նշանակությունը հատկապես աճում է դպրոցական կրթության անցումային փուլերում, և մասնավորապես՝ կրտսերից միջին դպրոց անցման շրջանում, քանի, որ ինչպես իրավացիորեն նշում է ականավոր հոգեբան Գ. Ա. Ցուկերմանը, ընդգրկում է երկու ճգնաժամային իրողություններ՝ տարիքային և կենսական, որտեղ անձի զարգացման ճգնաժամային շրջանն ըստ էության համընկնում է դպրոցական կյանքի ուսուցման պայմանների կտրուկ փոփոխությունների հետ[8]:

Ուսուցիչների սոցիալ-հոգեբանական կոմպետենտության դերի բարձրացումը ու նշանակությունը մեծանում է հատկապես միջին դպրոցում, քանի որ այն համապատասխանում է առարկայական ցանկի համալրման, աշակերտին ներկայացվող

[8]Цукерман Г. А. Переход из начальной школы в среднюю, как психическая проблема,, Вопросы психологии. - 2001 - 5.19 - 34 с.

ուսումնական պահանջների մեծացման, աշակերտների տարիքային ճգնաժամերի, հարմարման մեխանիզմների դժվարությունների հետ:

Ժամանակակից հոգեբանության մեջ ապացուցվում է մանկավարժների սոցիալ-հոգեբանական կոմպետենտության և կրթության որակի, ինչպես նաև ուսումնական մոտիվացիայի միջև փոխադարձ կապը:

Արդյո՞ք ուսումնական մոտիվացիայի ձևավորման մասին խոսելիս, որպես առաջնային գործոններ, պետք չէ դիտարկել ուսուցչի առարկայական կոմպետենտությունը, գիտելիքի մատուցման ձևը, գիտելիքի նկատմամբ ուղղվածության ձևավորման հմտությունները, իսկ սոցիալ-հոգեբանականը՝ դիտարկել որպես ձևավորման պայման:

Բնականաբար, զուտ պայմանական առումով սրանք հանդես են գալիս առանձին, սակայն մենք ենթադրում ենք, որ փոխներգործուն ուսումնառության պայմաններում, որն արտահայտում է պայմանի և գործոնի նշված գնալով ավելի վճռորոշ դեր է խաղում աշակերտի մոտիվացիայի զարգացման հարցում:

Առարկայական կոմպետենտության առումով կարևորվում է բարձր առարկայական կոմպետենտությամբ ուսուցիչների դերը, ինչը վկայում է այս գործոնի չեզոք ազդեցության մասին: Միաժամանակ, թերևս շատ դժվար է առանձնացնել գիտելիքի նկատմամբ ուղղվածության դրսևորման հմտությունները և դրանք դիտարկել զուտ առարկայական կոմպետենտության համատեքստում, քանի որ այս գործոնը հենց պայմանավորում է հաղորդակցական, ազդեցիկության, ապրումակցման և այլ մի շարք կարողություններ, որոնք դիտարկվում է սոցիալ-հոգեբանական կոմպետենտության կազմում:

Կրթության հոգեբանության մեջ հայտնի են ժամանակակից արտասահման հոգեբաններ Է. Դեսի և Ռ. Ռայանի հետազոտությունները, որոնք առաջարկում են ինքնապատճառականության տեսությունը, և այն բացատրելու համար առանձնացնում են ուսումնական մոտիվացիայի ձևավորման մեխանիզմները[9]: Համաձայն ինքնապատճառականության տեսության՝ մարդու վարքի մոտիվացիան հիմնվում է երեք բազային ինքնավար կամ ավտոնոմ, կոմպետենտության և ուրիշների հետ

[9]Deci E.L., Ryan R.M. Intrinsic motivation and self - determination in human behavior. New York: Plenum, 1985.

կապվածության պահանջմունքների վրա: Ավտոնոմ պահանջմունքը դրսևորվում է, երբ անձը զգում է սեփական ընտրությունը, և հասկանում է իր վարքի պատճառականությունը: Ինքնավար պահանջմունքի բավարարման ժամանակ անձն ակտիվ է, սեփական արարքների նախաձեռնողն է: Կոմպետենտության պահանջմունքը դրսևորվում է, երբ անձն իրեն օգտակար է զգում, կարողանում է լուծել իր առջև ծառացած ուսումնական խնդիրները: Ուրիշների հետ կապվածության դրսևորման ժամանակ անձը ձգտում է վստահելի հարաբերություններ հաստատել իր համար նշանակալի անձանց հետ:

Այսպիսով, ինքնապատճառականության տեսությունը այս պահանջմունքները մեկնաբանում է անհատ-միջավայր փոխազդեցության կապով՝ շեշտադրելով այն գաղափարը, թե որքանով է միջավայրը ֆրուստրացնում կամ նպաստում անձի պահանջմունքների բավարարմանը:

Կրթության հոգեբանությամբ զբաղվող ժամանակակից հայ հոգեբանները սովորողների ուսումնական մոտիվացիայի զարգացման գործոն համարում են ուսուցչի բարոյահոգեբանական մտահաստությունը, (աշակերտների հասկացումը, դիտողունակություն, էմպատիան)[10]:

Այսպիսով, փոխներգործուն ուսուցումն ապահովող, ուսման մոդելատոր հանդիսացող սոցիալ-հոգեբանական բարձր կոմպետենտությամբ օժտված ուսուցչի, միջնանձային վստահելի, աջակցող հարաբերությունների առկայության պայմաններում աշակերտները ուսումնական ակտիվություն, պատասխանատվություն են ստանձնում իրենց ուսումնառության համար:

Այսպիսով, մենք տեսնում ենք, որ ուսումնական հաջողությունը մեծապես կախված է ուսումնական մոտիվացիայի աճից: Իսկ աշակերտների ուսումնական մոտիվացիայի աճին նպաստող հոգեբանական գործոն մենք համարում ենք ուսումնական խմբի միջանձնային հարաբերությունների զարգացումը, ուսուցչի սոցիալ-հոգեբանական կոմպետենտության դերի բարձրացումը:

---

[10]Հակոբյան Ն. Ռ. Սարգսյան Վ. Ժ., Վարդանյան Է. Թ., Մանկավարժների բարոյահոգեբանական մտահաստությունը որպես միջին դպրոցի սովորողների ուսումնական դրդապատճառների զարգացման գործոն, Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ, միջ- բուհական կոնսոցիումի գիտական հանդես, 3/6, Երևան - 2009, էջ 159 -164:

Ինչպես ցույց են տալիս հետազոտությունները, մասնավորապես՝ անհատական դեպքերի վերլուծությունները փոխներգործուն ուսուցման պայմաններում ուսուցչի նեգատիվ վերաբերմունքը, քննադատությունը, անհանդուրժողականությունը, կասկածամտությունը, իջեցնում է աշակերտի ուսումնական մոտիվացիան:

Ներկայացնենք մի քանի իրավիճակ: Օրինակ՝ 6-րդ դասարանում սովորող Կ. Ա.-ի մոտ ցածր է ուսումնական մոտիվացիան:

Իրավիճակ 1. Մի անգամ, անգլերեն լեզվի դասաժամին ուսուցիչը շարադրություն է հանձնարարում «My dream»: վերնագրով: Տղան պատմում է, որ շարադրությունը բարձրաձայն չի կարդացել և չի հանձնել ուսուցչուհուն, որովհետև չի ցանկանում, որ իրեն խղճան:

Դասարանում բացակայում է ապրումակցման և փոխվստահության մթնոլորտը: Այսպիսի իրավիճակները շատ են դպրոցում, ինչը վկայում է հոգեբանական ծառայությունների ներդրման հրատապության ն խնդիրներին կիրառական լուծումներ առաջարկելու անհրաժեշտության մասին:

Այսպիսով, ամփոփելով վերը շարադրածը, կարծում ենք, որ հրատապ է ժամանակակից դպրոցի հոգեբանական ծառայություններին առաջարկել ուսուցիչների սոցիալ-հոգեբանական կոմպետենտությունը զարգացնող թրեյնինգային ծրագիր, մշակել նպատակաուղղված ռազմավարություն, որոնք ուղղված կլինեն ուսուցիչների հանդուրժողականության, հաղորդակցական մշակույթի բարձրացմանը, էմպատիայի, ռեֆլեքսիվ կարողությունների զարգացմանը, մասնագիտական այրման հաղթահարմանը, ինչն էլ մեծապես կնպաստի միջնանձային վստահելի, աջակցող հարաբերությունների զարգացմանը և փոխներգործուն ուսուցման գործընթացի կազմակերպման բարելավմանը:

ԳԼՈՒԽ 2. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱՆԳԼԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ԽԹԱՆՄԱՆ ՁԵՎԵՐ

2.1 Խաղային տեխնոլոգիաների օգտագործումը օտար լեզվի դասաժամին որպես մոտիվացիայի ձևավորման միջոց

Խաղային տեխնոլոգիաները եզակի են մանկավարժության համար. մի շարք գիտնականներ խաղը բնորոշում են որպես ուսումնական մոտիվացիայի ճանաչման և զարգացման միջոց: Դիդակտիկ խաղն ուղղված է կոնկրետ խնդիրների լուծմանը, ունի դաստիարակչական և զարգացնող ազդեցություն սովորողների վրա: Խաղի պայմաններում սովորողները գտնվում են հաջողության իրավիճակում, խաղը սովորողներին դնում է նույն հարթության վրա, օգնում է կատարել առաջադրանքները՝ բացահայտելով սովորողների բոլոր անհատական կարողությունները: Հարկ է նշել, որ խաղը ճանաչողական մոտիվների զարգացման արդյունավետ միջոց է: Սովորողները ցանկանում են ամեն ինչ իմանալ, սակայն անգիր սովորելու գործընթացը նրանց համար դժվար է և անհրապույր: Ես հաճախ եմ իմ դասերին օգտագործում դերային խաղը: Նման խաղը օգնում է ակտիվացնել գիտելիքները և տալիս է նրանց գործնական նշանակություն, սովորողները տեսնում են իրենց աշխատանքի արդյունքը: Իմ պրակտիկայի հիման վրա՝ բեմադրելով տեսարաններ և երկխոսություններ՝ աշակերտների մոտ ամրապնդվում է ոչ միայն բառապաշարը, այլև քերականական կառուցվածքները: Դասը անցնում է արագ, անկաշկանդ մթնոլորտի հետևում թաքնված է խաղի դիդակտիկ նպատակը, այդպիսով իրականացվում է «սովորել խաղալով» սկզբունքը, որն այնքան հարազատ է միջին դասարանների աշակերտներին:

Խաղերի տիպաբանությունները կառուցվում են՝ կախված ուսումնական խաղի նպատակներից ու խնդիրներից, խաղի ձևից, կազմակերպման եղանակից, բարդության աստիճանից և մասնակիցների թվից:

Ըստ ուսուցման նպատակների և խնդիրների՝ օտարալեզու դասերին կիրառվող ուսումնական խաղերը կարելի է բաժանել լեզվական (ոլորտային) և խոսքային[11]:

[11] Бим И. Л. Некоторые актуальные проблемы современного обучения иностранным языкам. - //ЯИШ, 2001, № 4.

Լեզվական խաղերը, որոնք օգնում են սովորել լեզվի տարբեր կողմերը (հնչյունաբանություն, բառապաշար, քերականություն, շարահյուսություն, ոճ), համապատասխանաբար բաժանվում են հնչյունական, բառային, քերականական, շարահյուսական, ոճական:

Լեզվական խաղերը նպաստում են սովորողների ակտիվացմանը դասարանում, զարգացնում նրանց խոսքային նախաձեռնողականությունը:

Խոսքային խաղերը ուղղված են խոսքային գործունեության որոշակի տեսակների հմտությունների ձևավորմանը: Խոսքային գործունեության յուրաքանչյուր տեսակ համապատասխանում է որոշակի տեսակի կրթական խաղի, որն ուղղված է լսողական ընկալման ուսուցմանը, մենախոսության և երկխոսական խոսքի ուսուցմանը, կարդալու և գրելու ուսուցմանը[12]:

- ✓ Ըստ վարման ձևի՝ խաղերը լինում են առարկայական, շարժական՝ բանավոր բաղադրիչով, սյուժետային կամ իրավիճակային, դերային, մրցութային խաղեր, ինտելեկտուալ խաղեր (փազլներ, խաչբառեր, շղթայական բառեր, վիկտորինաներ և այլն), փոխազդեցության խաղեր (հաղորդակցական, ինտերակտիվ):
- ✓ Ըստ խաղերի կազմակերպման եղանակի՝ լինում են համակարգչային և ոչ համակարգչային, գրավոր և բանավոր, սիմուլյացիոն, ստեղծագործական և այլն:
- ✓ Կատարված գործողությունների բարդության աստիճանի համաձայն՝ բոլոր ուսումնական խաղերը բաժանվում են «պարզ» (միավիճակային) և «բարդ» (բազմաիրավիճակային), իսկ ըստ անցկացման տևողության՝ երկար և կարճ:
- ✓ Ըստ խաղի մասնակիցների քանակի բաժանվում են անհատական, զույգային, խմբային, թիմային և կոլեկտիվ:

Առաջարկում ենք դասի պլան՝ անգլերեն լեզվի ուսուցման սկզբնական փուլում խաղային տեխնոլոգիաների կիրառմամբ: Դասարանում ինտերակտիվ տեխնոլոգիաների, պրոյեկտորի, վիդեո և աուդիո նյութերի կիրառումը հնարավորություն է տալիս սովորողներին ակտիվացնել և հետաքրքրություն առաջացնել ուսումնական գործունեության նկատմամբ, ինչի շնորհիվ իրականացվում են կրթական, ժամանցային և

[12] Колесникова И.Е. Игры на уроке английского языка. Минск: Народная Асвета, 1990. с. 89.

հանգստի գործառույթներ: Տեսողական տարրերի, աշխատանքի տարբեր ձևերի օգտագործումը (անհատական, խմբակային, զույգերով) նպաստում է յուրաքանչյուրի անհատական հնարավորությունների բացահայտմանը, աշակերտը գիտակցում է նաև իր անձնական կարևորությունը ուսումնական գործընթացում, ինչը թույլ է տալիս բարձրացնել նրա մոտիվացիան: Դասարանում տարբեր տեսակի կրթական գործունեության և աշխատանքի ձևերի համակցման շնորհիվ մենք իրականացնում ենք կրթական, հաղորդակցական և զարգացնող գործառույթ:

Դասի թեմա - «Travel and transport», 7-րդ դասարան[13]:

Նպատակը - սովորեցնել անվանել տրանսպորտային միջոցները և զարգացնել ճամփորդական բառապաշարը, նպաստել խոսքային, լսողական և կարդալու ունակությունների զարգացմանը:

Խնդիրները.

- Ուսումնական. ծանոթանալ նոր բառապաշարին, սովորել բառերը ճիշտ արտասանել:
- Զարգացնող. զարգացնել կարդալու, խոսելու և լսողական հմտությունները:
- Կրթական. ձևավորել համագործակցության մեջ աշխատելու հմտություն, հարգանքով վերաբերվել ընկերներին և ուսուցչին:

Պլանավորված արդյունքներ.

- Անձնային.

1. Ուսումնական գործունեության շարժառիթների զարգացում, ուսուցման անձնական մոտիվի ձևավորում:

2. Ինքնավերահսկողության հմտությունների ձևավորում,

- Առարկայական

1. Ուսումնական գործունեության նպատակներն ու խնդիրները հասկանալու, դրա իրականացման միջոցները գտնելու ունակություն:

2.Հաղորդակցման առաջադրանքին համապատասխան խոսքային միավորներ կառուցելու ունակություն:

---

[13]Գրիգորյան Լ., Անգլերեն: Դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի 7-րդ դասարանի համար / Լ.Գրիգորյան, Երևան, Զանգակ հրատ., 2014:

- Թեմատիկ

1. «Ճամփորդություն» թեմայով բառապաշարի ձևավորում,

2. Լսելու, կարդալու և խոսելու հմտությունների զարգացում:

Սարքավորումներ՝ նկարներով բացիկներ, տրանսպորտային միջոցների նկարներ, Spotlight 3 դասագիրք, համակարգիչ, պրոյեկտոր, էկրան:

Դասերի ընթացքը.

I. Կազմակերպչական պահ (1 րոպե)

Ուսուցիչը ողջունում է սովորողներին

T: Good afternoon, children!

P: Good afternoon, teacher!

T: Nice to see you today! Sit down, Please!

II. Հնչյունային վարժանք (5 րոպե)

T: Look at the whiteboard. You can see the nouns and verbs. Let's read it together.

Սովորողները կարդում են տրանսպորտային միջոցների անունները և գործողություն արտահայտող բառերը:

Սեղանի շուրջ աշակերտները նախօրոք հանձնարարված բառերերից կազմում են տեքստ: Ուսուցիչը քայլում է շարքերով և ստուգում:

T: Well done, children!

III. Դասի նպատակների սահմանում (2 րոպե)

IV. Աշխատանք դասի թեմայով.(10 րոպե)

1. Նոր բառապաշարի ներկայացում.

T: Look at the white board. This is a nouns associated with travel - journey/voyage/trip/flight /drive/ride/tour.

Ուսուցիչը գրատախտակին փակցված առարկաները անվանում է իրենց անուններով, երեխաները կրկնում են և գրի առնում իրենց բառարաններում:

T: Let's read the dialogue in the exercises 5 and translate.

Երեխաները կարդում են երկխոսությունը վարժություն 5-ի և թարգմանում այն արտահայտությունները, որոնք ասում են հերոսները:

T: Let's translate the phrases! "What's this?" "It's a…"

V. Նոր նյութի ամփոփում (12 րոպե)

T: Now let's practice! Let's play with our cards!

Ուսուցիչը երեխաներին դասավորում է 2 շրջանակների մեջ (մեկը մյուսի ներսում), այնպես, որ երեխաները կանգնեն միմյանց դեմ և կազմեն զույգեր: Ուսուցիչը բացիկները բաժանում է ներքին շրջանակին և բացատրում կանոնները:

T: Այժմ սովորողները, ովքեր կանգնած են բացիկներով, կտան այն հարցը՝ What's this? թե ինչ է սա, իսկ սովորողները, ովքեր կանգնած են արտաքին շրջանակում, կպատասխանեն՝ It's a… Որպեսզի ոչ մի դժվարություն չունենաք, քարտերի վրա նշված բառերը տպագրված են տրվում: Now we are ready to start! Let's go! Երբ երեխաներն ավարտում են մեկ շրջան, ներքին և արտաքին շրջանակները փոխում են տեղերը և դա անում են նորից:

T: Good job! Sit down, please!

VI. Դասի թեմայով աշխատանքի շարունակություն.

T: Now let's listen to the conversation /soundtrack 19/ .

Երեխաները լսում են աուդիոն և պատասխանում ուսուցչի հարցին:

Այնուհետև ուսուցիչը բաշխում է երկխոսության դերերը, իսկ երեխաները կարդում են երկխոսությունը:

VII. Տնային աշխատանքների հանձնարարում.

T: Your task is to make the cards with nouns associated with travel. Ձեր խնդիրն է ճամփորդության հետ կապված գոյականներով բացիկներ պատրաստել և նախադասություններ գրել դրանց համար:

III. Ամփոփում.

T: So, our lesson is over. Do you like the lesson?

Ուսուցիչը հարցնում է, թե արդյո՞ք երեխաներին դուր է եկել դասը և ի՞նչ են նրանք սովորել:

Շնորհակալություն նրանց և հրաժեշտ տվեք:

T: Thank you for our lesson, good bye!

2.2 Հեքիաթների օգտագործումը օտար լեզվի դասաժամին որպես մոտիվացիայի խթանման միջոց

Շատ դժվար է տիրապետել անգլերենի հաղորդակցական ունակություններին՝ առանց ուսումնասիրվող լեզվի երկրում գտնվելու: Ուստի ուսուցչի կարևոր խնդիրն է օտար լեզվի դասին ստեղծել հաղորդակցության իրական և երևակայական իրավիճակներ՝ դրա համար օգտագործելով տարբեր մեթոդներ և տեխնիկա (դերային խաղեր, քննարկումներ, ստեղծագործական նախագծեր և այլն): Նույնքան կարևոր է դպրոցականներին տվյալ ժողովրդի մշակութային արժեքներին ծանոթացնելու խնդիրը: Այդ նպատակով լեզվական տեքստը և նկարազարդումները մեծ նշանակություն ունեն:

Անգլերենի ժամանակակից դասագրքերի անկասկած առավելությունը տվյալ երկրին հատուկ տեղեկատվության հագեցվածությունն է: Տեքստերի մեջ նշանակալի տեղ են զբաղեցնում այնպիսի տեսակներ, ինչպիսիք են նամակները, գովազդները, ցուցանակները, հարցաթերթիկները, ճաշացանկերը: Բոլոր փաստերն ու երևույթները, բոլոր տեղեկությունները իրականության տարբեր ոլորտների մասին մեր երկրում և անգլիախոս երկրներում ընտրվել են՝ հաշվի առնելով սովորողների տարիքը և նրանց հետաքրքրությունները: Նյութի յուրացումը հնարավորություն կտա դպրոցականներին ավելի լավ կողմնորոշվել ուսումնասիրվող լեզվի երկրում՝ այնտեղ իրական այցելության դեպքում: Դրա հետ մեկտեղ կարևոր է սովորողներին տալ անգլիախոս երկրների կյանքի, ավանդույթների և լեզվական իրողությունների տեսողական պատկերացում: Այս նպատակին կարող են ծառայել հեքիաթները, որոնց կիրառումը նպաստում է հաղորդակցական մեթոդաբանության կարևորագույն պահանջի իրականացմանը՝ լեզվի յուրացման գործընթացը ներկայացնել որպես կենդանի օտարալեզու իրականության ըմբռնում: Ավելին, հեքիաթների օգտագործումը դասարանում նպաստում է ուսուցման անհատականացմանը և սովորողների խոսքային գործունեության մոտիվացիայի զարգացմանը: Օտար լեզուների դասերին հեքիաթներ օգտագործելիս զարգանում է մոտիվացիայի երկու տեսակ՝ ինքնամոտիվացիա, երբ հեքիաթն ինքնին հետաքրքիր է, և ուսումնական մոտիվացիա, որը ձեռք է բերվում՝ ցույց տալով աշակերտին, որ նա կարող է հասկանալ իր սովորած լեզուն: Սա գոհունակություն է առաջացնում և վստահություն է հաղորդում նրանց ուժերին և հետագա կատարելագործման ցանկությանը: Պետք է ձգտել

այնպես անել, որ սովորողները հեքիաթից բավարարվածություն ստանան հենց լեզուն հասկանալու, այլ ոչ միայն հետաքրքիր ու զվարճալի սյուժեի միջոցով:

Հեքիաթի մյուս առավելությունը տպավորության ուժն է և սովորողների վրա հուզական ազդեցությունը: Ուստի հիմնական ուշադրությունը պետք է ուղղվի սովորողների անձնական վերաբերմունքի ձևավորմանը կարդացածի նկատմամբ: Նման նպատակի հաջող իրագործումը հնարավոր է միայն առաջին հերթին համակարգված ընթերցանությամբ, երկրորդ՝ մեթոդական կազմակերպված ընթերցանությամբ:

Ա.Ն. Ուտեխինան կարծում է, որ դրամատիզացումը հատուկ գեղագիտական դաստիարակություն է աշակերտների համար, ինչպես նաև զարգացնում է խոսքը, ինտոնացիան և երևակայությունը: Իր աշխատանքում նա առանձնացնում է մի քանի մանկավարժական պայմաններ, որոնք նպաստում են հաջող դրամատիզացմանը: Դրանց մեջ մտնում է[14].

1) անհրաժեշտ է ընտրել այն երկրի հեքիաթը, որի լեզուն մենք ուսումնասիրում ենք.

2) հեքիաթը պետք է անպայմանորեն համապատասխանի երեխաների տարիքին, ֆիզիկական, հուզական և անձնային հատկանիշներին, անհատական հետաքրքրություններին, նախասիրություններին և հետաքրքրություններին.

3) անհրաժեշտ է ճիշտ հարմարեցնել հեքիաթի տեքստը, այսինքն՝ հակիրճ և պարզ սցենար գրել:

Մենք առաջարկում ենք ուրվագծային պլան՝ անգլերենի դասին օգտագործելով հեքիաթ: 5-րդ դասարանի ուսումնական ծրագիրը ներառում է «The Princess and the dragon» հեքիաթը[15]:

Թեմա - «The Princess and the dragon», 5-րդ դասարան

Նպատակը - Զարգացնել կարդալու, լսելու, խոսելու և գրելու հմտությունները:

Խնդիրներ.

---

[14]Утехина А.Н. Драматизация сказки в раннем обучении иностранному языку / А.Н. Утехина. // Всероссийский научно-популярный методический журнал 96 по раннему обучению иностранному языку для учителей, родителей и детей, 2001, - № 3/4.

[15] Գրիգորյան Լ., Անգլերեն: Հանրակրթական հիմնական դպրոցի 5-րդ դասարանի դասագիրք: Երևան, Զանգակ, 2014:

- Ուսումնական՝ ծանոթանալ նոր բառապաշարին, սովորել բառերը ճիշտ արտասանել,
- Զարգացնող՝ զարգացնել կարդալու, խոսելու և լսելու ունակությունները,
- Տեղեկատվական. ծանոթանալ ուսումնասիրվող լեզվի երկրի մշակույթին

Սարքավորումներ՝ դասագիրք, համակարգիչ, բարձրախոսներ։

2.3 Տեսանյութի օգտագործումը օտար լեզվի դասաժամին որպես մոտիվացիայի խթանման միջոց

Օտար լեզվի ուսուցման ժամանակակից մոտեցումը ենթադրում է նոր մեթոդների և տեխնոլոգիաների կիրառում: Տեսանյութի օգտագործումը դրանցից մեկն է: Այն թույլ է տալիս լիցքաթափել իրավիճակը, բարձրացնել մոտիվացիան, անգլերենի ուսուցման գործընթացը դարձնել ավելի արդյունավետ և հաճելի: Ներկայումս առաջարկվում է հարմարեցված և վավերական ֆիլմերի հսկայական ընտրանի՝ պատրաստի դասի մշակումներով: Իսկ ուսուցիչը, ով ցանկանում է իր դասերին օգտագործել տեսանյութը, հնարավորություն ունի առանց ջանքերի ընտրել այն, ինչ իրեն պետք է և ցույց տալ դասարանում: Այնուամենայնիվ, ինչպես ցույց է տալիս պրակտիկան, ծրագրված դասը միշտ չէ, որ հաջողված է, նույնիսկ եթե ուսուցիչը հետևում է բոլոր առաջարկություններին: Սրա պատճառը ոչ այլ ինչ է, քան կոնկրետ ուսումնական իրավիճակ: Ի վերջո, կարևոր է ոչ միայն ցուցադրելու համար ճիշտ ֆիլմ ընտրելը, այլև որոշել, թե ինչ առաջադրանքներ տալ սովորողներին և ինչ հաջորդականությամբ: Դժվար չի լինի, եթե իմանաք տեսանյութերի հետ աշխատելու հիմնական սկզբունքները և հաշվի առնեք այս տեխնոլոգիայի առանձնահատկությունները: Մոտիացիայի խթանման այս մեթոդը նոր չէ և վերցված է արտասահմանյան աղբյուրներից: Այնուամենայնիվ, դրա առավելությունն այն է, որ մեթոդը մշակվել է տարբեր աղբյուրներից, դասակարգվել և ներմուծվել ուսումնական համակարգ: Դա ուսումնասիրելով՝ գրեթե ցանկացած ուսուցիչ կկարողանա հարմարեցնել ուրիշների կողմից ստեղծված ուսումնական նյութերը ուսումնական կոնկրետ իրավիճակին և, անհրաժեշտության դեպքում, ինքնուրույն մշակել տեսադասերի պլաններ:

Մինչ այս տեխնոլոգիայի էության մասին խոսելը, կցանկանայի հիշեցնել, որ անգլերենի դասերին տեսանյութի օգտագործումը նպատակահարմար է և կարևոր, և,

հաշվի առնելով ռուսերեն և արտասահմանյան աղբյուրներում տրված տեղեկատվությունը, ինչպես նաև մեր սեփական դիտարկումները, առաջարկում ենք օտար լեզուների ուսուցման գործընթացում տեսանյութի օգտագործման հետևյալ հիմնավորումը.

1. Տեսանյութի դիտումը տեղեկատվության ինչպես ձայնային, այնպես էլ տեսողական ընկալում է, ինչը շատ կարևոր է անգլերենի դասերին: Օրինակ, դիտողը ոչ միայն դիտում է մարմնի լեզուն և դեմքի արտահայտությունները, այլև ընկալում է ռիթմը, ինտոնացիան և սթրեսը: Խոսակցական լեզուն ունի տեսողական ամրապնդում:

2. Ուսուցչի կողմից ճիշտ ընտրված նյութը հասանելի է նույնիսկ նրանց, ովքեր դեռ լավ չեն կարողանում կարդալ և գրել անգլերեն:

3. Տեսանյութը թույլ է տալիս լեզուն սովորել տվյալ համատեքստում:

4. Դիտման գործընթացն ինքնին վերահսկվում է՝ կարող եք կանգ առնել, դադար տալ, նորից դիտել:

5. Հանդիսատես կարող են լինել ցանկացած տարիքային խմբի աշակերտներ: Կազմը նույնպես կարող է տարբեր լինել՝ խումբ, անհատ աշակերտ, ինքը՝ ուսուցիչը:

6. Դիտման համար ընտրված նյութը հաճախ հիմնված է բոլորին քաջածանոթ ու սիրված պատմությունների վրա, ինչը նշանակում է, որ ունկնդիրների մոտիվացիան միշտ բավականին բարձր է լինում:

7. Տեսանյութը թույլ է տալիս կատարելագործել հմտություններն ու կարողությունները, քանի որ այն բառապաշարի, քերականության, շարահյուսության, հնչյունաբանության և դիսկուրսի այլ տեսակների հարուստ լեզվական աղբյուր է:

8. Եվ, ամենակարևորը, տեսանյութն օգնում է ստեղծել հաղորդակցական իրավիճակ, երբ սովորողները սկսում են օգտագործել լեզուն որպես կենդանի շփման միջոց:

Վերևում արդեն ասվեց, որ չափազանց կարևոր է ճիշտ ընտրել դիտման նյութը: Նյութեր ընտրելիս խորհուրդ է տրվում առաջնորդվել հետևյալ չափանիշներով.

1. նյութի համապատասխանությունը սովորողների հետաքրքրություններին և փորձին,

2. լեզվական համապատասխանություն սովորողների մակարդակին,

3. դիտվող նյութի տևողությունը (այն պետք է լինի նախապես հաշվարկված և դասի մեջ տեղավորվող՝ ամբողջությամբ վերցրած ակադեմիական ժամը կամ դրա միայն մի մասը, օրինակ 15 րոպե, բայց երբեք չի կարող ավելի երկար լինել, քան ինքնին դասը),

4. հատվածի ինքնավարությունը, այսինքն՝ այն պետք է հասկանալի լինի,

5. տեսադասի նպատակների և խնդիրների համապատասխանությունը օրացուցային-թեմատիկ պլանավորմանը և ծրագրին:

Նյութն ընտրելուց հետո աշխատանքի հաջորդ փուլը ուսուցչի ղեկավարությամբ աշակերտների կողմից իրականացվող գործողությունների մասին մտածելն է: Ձեր սեփական նյութը ստեղծելիս կամ գոյություն ունեցող վարժությունները հարմարեցնելիս կարևոր է հաշվի առնել, որ տեսադասը երեք փուլից բաղկացած գործընթաց է.

1) նախադիտում (pre-viewing),

2) բուն դիտում (while-viewing),

3) հետդիտում (post-viewing):

Նրանցից յուրաքանչյուրը ներառում է մի քանի տեսակի վարժություններ. Պլանավորելիս ուսուցիչը հնարավորություն ունի ընտրել իր դասի նպատակներին և խնդիրներին համապատասխանող ամենահարմարը:

Այսպիսով, ուսուցիչն ունի գործիքների լայն զինանոց՝ հետաքրքիր և արդյունավետ դաս ստեղծելու համար: Դասավանդմանս պրակտիկայում ես հաճախ ընդգրկում եմ տեսանյութի դիտումը դասի մեջ և դասից 15-20 րոպե հատկացնում եմ դրան, իսկ կեսօրից հետո անգլերենի լրացուցիչ դասերին ես հնարավորություն ունեմ մի ամբողջ ակադեմիական ժամ նվիրել դրանց: Իմ աշխատանքում տեսանյութի հաճախակի օգտագործումը բացատրվում է հետևյալով. որպես դաստիարակ իմ հիմնական խնդիրն է երեխաներին սովորեցնել լեզուն օգտագործել և նրանց մոտիվացիան բարձր մակարդակի վրա պահել ուսումնական գործընթացում: Տեսադասի օրինակ որպես կարող է ծառայել անգլերենի 6-րդ դասարանի դասագրքի «The ugly ducking» հեքիաթի[16] համանունը անգլալեզու մուլտֆիլմը:

Դասի պլան – թեման՝ «The ugly ducking» հեքիաթն է, 6-րդ դասարան

[16] Գրիգորյան Լ., Անգլերեն: Հանրակրթական հիմնական դպրոցի 6-րդ դասարանի դասագիրք: Երևան, Զանգակ, 2015:

I. **Նախադիտման փուլ:** Ուսուցիչը հիշեցնում է հեքիաթի բովանդակությունը, հարցերի միջոցով սովորողների մոտ թարմացնում է հիմնական սյուժեն: Սրանով ուսուցիչը սովորողներին նախապատրաստում է տեսանյութի դիտմանը: Կարևորվում է հեքիաթում տեղ գտած հիմնական բառապաշարի արագ վերհիշումը:

II. **Բուն դիտման փուլ:**

T: So, watch the first section and tick what you can see.

Սովորողները ուսուցչի հետ միասին դիտում են «The ugly ducking» մուլտֆիլմից որոշ հատված: Ուսուցիչը 3 առաջադրանքով թռուցիկներ է բաժանում սովորողներին, որոնցից առաջինը աղյուսակ է.

Bet	
Hatch	
Tease	
Ugly	
Tight	
meadow	
mean	
miserable	

Սովորողները դիտում են ֆիլմը և նշան են դնում ֆիլմում տեսածի կողքին: Այնուհետև, ուսուցիչը հարցնում է՝

T: So what are your results? We can see… T: Now watch the second section and say: Why did the mother duck decide to sit on her nest in the old farmhouse? Because…

III. Հետդիտման փուլ.

T: Պատկերացրեք, որ ձեզ խնդրել են ձայնագրել այս մուլտֆիլմը: Դա անելու համար դուք պետք է կարողանաք ճիշտ արտասանել բառերն ու արտահայտությունները: Պարապեք զույգերով. T: So, who's the first?

Աշակերտները զեկուցում են երկխոսությունները զույգերով: Եթե որևէ բառ դժվարություն է առաջացնում, նրանք հարցնում են ուսուցչին:

Այսպիսով, այս դասը հնարավորություն է տալիս ոչ միայն խթանել երեխաների մոտիվացիան, այլև սովորեցնել նոր բառեր, վարժեցնել փոքրիկ երկխոսությունների, ձևավորել կարդալու և տվյալ համատեքստում հարցեր տալու ունակություններ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության նպատակներին և խնդիրներին համապատասխան՝ մանկավարժական գիտության տեսության և պրակտիկայի հիման վրա վերլուծվել է միջին դպրոցի սովորողների օտար լեզվի ուսուցման մոտիվացիայի ձևավորման գործընթացը: Կատարված տեսական վերլուծությունը հնարավորություն է տալիս բացահայտել ուսումնասիրվող խնդրի արդիականության բավականին բարձր մակարդակ, ինչը պայմանավորված է ժամանակակից աշխարհում միջազգային շփումների ընդլայնմամբ:

Ներկայումս հասարակությունը գոհ չէ սովորողների լեզվական պատրաստվածության մակարդակից: Այս իրավիճակից դուրս գալու ելքերից մեկը լեզվի ուսուցման սկիզբն ավելի վաղ տարիք տեղափոխելն է: Դպրոցական կրթության համակարգը և առաջին հերթին դրա սկզբնական փուլը նպատակաուղղված է միջին դպրոցի աշակերտների՝ իր խոսքն ու ոչ խոսքային վարքագիծն իրականացնելու անհրաժեշտության հետևողական հիմքերի ձևավորմանը՝ մայրենի լեզվով խոսողների հետ շփման կանոններին համապատասխան հաշվի առնելով ուսումնասիրվող լեզուն և մշակույթը, օտար լեզվի երկրի և ազգային մշակույթի ու միջմշակութային առանձնահատկությունները:

Մոտիվացիայի տեսամեթոդական վերլուծությունը ցույց է տալիս որ միջին դպրոցի սովորողների օտար լեզվի ուսուցման ընդհանուր կառուցվածքում գերակշռում են արտաքին դրդապատճառները: Դրանք առաջանում են միջին դպրոցի սովորողների տարիքային առանձնահատկություններով, աշակերտների և արտաքին աշխարհի միջև առկա հարաբերությունների համակարգով:

Հետազոտական աշխատանքով հիմնավորվում և փորձարարական ձևով հաստատվում է մանկավարժական պայմանների մի շարք, որոնց կիրառումը դպրոցական պրակտիկայում մեծացնում է միջին դպրոցի սովորողների օտար լեզվից ուսումնական մոտիվացիայի ձևավորման մակարդակը:

Ուսումնական արդյունքների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների կիրառումը զգալի դրական փոփոխություններ է արձանագրում միջին դպրոցի սովորողների օտար լեզվի

ուսումնական մոտիվացիայի ձևավորման մակարդակի վրա: Մանկավարժական նոր տեխնոլոգիաների կիրառման արդյունքում 5-9-րդ դասարանների սովորողների մոտիվացիայի ձևավորման մակարդակը զգալիորեն աճել է: Հետազոտական աշխատանքի հիմնական արդյունքներից էր միջին դպրոցի աշակերտների մոտ ներքին մոտիվացիայի ձևավորումը:

Այսպիսով, փորձարարական աշխատանքի ընթացքում իրականացված միջոցառումների համակարգը հնարավորություն է տալիս էապես բարձրացնել մոտիվացիայի ձևավորման մակարդակը և առաջին տեղում դնել միջին դպրոցի սովորողների կողմից օտար լեզվի ուսուցման ներքին դրդապատճառները:

Հետազոտությունների և փորձարարական աշխատանքների տեսական վերլուծությունը վերահաստատում է այն դիրքորոշումը, որ պետք է վերահսկվի միջին դպրոցի սովորողների օտար լեզվի ուսուցման մոտիվացիայի ձևավորման գործընթացը: Ստացված արդյունքները վկայում են միջին դպրոցական տարիքից սկսած մոտիվացիայի ձևավորման ուղղությամբ նպատակաուղղված աշխատանքի անհրաժեշտության մասին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գրիգորյան Լ., Անգլերեն: Հանրակրթական հիմնական դպրոցի 5-րդ դասարանի դասագիրք: Երևան, Զանգակ, 2014:
2. Գրիգորյան Լ., Անգլերեն: Հանրակրթական հիմնական դպրոցի 6-րդ դասարանի դասագիրք: Երևան, Զանգակ, 2015:
3. Գրիգորյան Լ., Անգլերեն: Դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի 7-րդ դասարանի համար / Լ.Գրիգորյան, Երևան, Զանգակ հրատ., 2014:
4. Գևորգյան Ս. Ռ., Հաղորդակցում հասկացությունը հոգեբանական գիտության մեջ, Հոգեբանությունը և կյանքը, Երևան - 2005, թիվ 1:
5. Հակոբյան Ն. Ռ. Սարգսյան Վ. ժ, Վարդանյան է Թ. Մանկավարժների բարոյահոգեբանական մտահասությունը որպես միջին դպրոցի սովորողների ուսումնական դրդապատճառների զարգացման գործոն, Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ, Միջբուհական կոնսոցիումի գիտական հանդես, 3/6, Երևան - 2009:
6. Асеев В. Г. Мотивация поведения и формирование личности. – М., 1976.
7. Бим И. Л. Некоторые актуальные проблемы современного обучения иностранным языкам. - //ЯИШ, 2001, № 4.
8. Колесникова И.Е. Игры на уроке английского языка. Минск: Народная Асвета, 1990.
9. Общая психология: Учебник /под ред. Тугушева Р.Х. и Гарбера Е.И. – М.: Эксмо, 2006.
10. Реан А. А. Коломинский Я. Л. ,, Социальная педагогическая психология. СПБ; Питер Ком, 1999.
11. Регуш Л. А. Самоотношение подростков и переживание проблем школьной жизни; Научный журнал; Известия РГПУ им. А.И. Герцена 2009; № 100.
12. Утехина А.Н. Драматизация сказки в раннем обучении иностранному языку / А.Н. Утехина. // Всероссийский научно-популярный методический журнал 96 по раннему обучению иностранному языку для учителей, родителей и детей, 2001, - № 3/4.
13. Фридман Л.М. Кулагина И.Ю. Психологический справочник учителя. - М.: Просвещение, 1991.